

զոր հիմակ բնապատուճը Ծիրանաբեր (Porphyrophora) կը կոչեն, երկու տեսակ է. արուն՝ ճանճի ձեւով է, իսկ էզը՝ որ բուն որդն է՝ տակի կողմէն տափակ է, վրայէն՝ կորընթարդ. արտաքին կողմէն՝ շառագոյն կամ մութ կարմրագոյն, իսկ ներսէն՝ մանիշակագոյն, ուր կը տեսնուին մանրիկ հատեր, զոր լուծելով տարրաքննութեամբ, կենդանական նիւթ մը դուրս կու գայ, և ուրիշ իւղային պարարտ և քիչ մը հոտաւէտ նիւթ, դարձեալ կ'արտադրէ փոսփատ, քլորոտ, եւն., և յատկապէս բոսորային նիւթը»¹:

«Կաւուտ և պարարտակախառն երկրին վրայ մեծապէս կ'աճի Հայկական Սէզն, որոյ ցողունները նիզակաձեւ մաշկօք կամ թեփերով կը տարածուին գետնին վրայ, և ոմանք սակաւ մի վեր բարձրանալով՝ տերեւներ և մանր ծաղիկներ կ'արձակեն: Յունիս ամսոյն՝ տերեւներուն անկեանց մէջ կը ծնանին կարմրոյ որդերը ոլոռնաչափ մեծութեամբ, առջի բերան գետնին երեսը կը փնան սէզներուն հետ մէկտեղ, և երբ արեգական ջերմութիւնը կ'աճի, վեր կ'ելլեն կը կանգնին. և երբեմն այնքան առատ և հոժ կը գանուին այս ճճիք, մինչեւ կարծես գետնին երեսը կարմրագոյն գորգ մը տարածուեր է: Այրարտեան կարմրոյ արու որդը սեւագոյն է, թափանցիկ թեւերով՝ վարդագոյն եզերներով, խոշոր աչքերով կամ բազմաչեայ, երկայն ոտքերով և երկայն պոչով, ասուի կամ մետաքսի նման ոլորկ և փայլուն, իսկ էզը ձուածեւ է և կարմրագոյն, կրկին մեծութեամբ արուին, վեց մանր և թոյլ թաթերով, ուստի գրեթէ ոտքի վրայ իսկ չի կրնար կենալ»²:

Ուրեմն Հայկական Ուրդանը որոշ տեսակ մըն է որ ոչ թէ ծառերու կամ անոնց

կիթ մէկէն ձգելէն ետքը՝ ծառին ճիւղերուն կամ տերեւներուն վրայ կ'աճէ՝ մէկէն կը մեանի. Զագերը անոր չորցած կաշիին տակը մեծնալէն ետեւ դուրս կ'ելլեն, ու կը սկսին ծառին վրայ վազվառէլ. բայց խիստ մանր ըլլալով՝ գրեթէ աչքի չեն երեւար» («Բազմավէպ» 1843. էջ 57):

1. «Բազմավէպ», 1890, էջ 275-276. 2. Աւերջան կ'ըսէ. «որուն նմանը (≡ Հայաստանի որդանին) յՅւ-

ճիւղերուն և տերեւներուն վրայ կ'աճի, այլ Հայաստանի յատուկ սեզի մը վրայ: «Մեր պատմիչներէն ոմանք, ինչպէս են Խորենացի, Ղազար Փարպեցի և այլք, կը հաստատեն թէ այս ճճիները այն բուսոց արմատներէն կ'ելլեն՝ որոց վրայ կը տեսնուին, և այն բոյսը՝ մէկը սեզ կը կոչէ, իսկ այլ ոք՝ եղեգեւտեր արմատներ, յորոց կը ծնանին որդերը»³: Արդարեւ Մ. Խորենացւոյ Աշխարհագրութեան մէջ կը գտնեմ. «Ունի Այրարատ որդն արմատոյ սիզոյ առ ի զարդ կարմրութեան գունոյ»:

Սէզին մասին մեզի կը տրուին կարեւոր տեղեկութիւններ: «Արդի ստոյգ քննողները կը կոչեն այն սէզը՝ Pimpinella, իսկ այլ բուսարանք՝ Poa-punges, կամ Aeluropus laevis, և ճահճային տեղերու մէջ գտնուածը՝ Dactylis litoralis: Ամառ ատեն բազմութեամբ կ'աճէ կը տեսնուին այն ճճիները սէզերուն վրայ, և կարելի է ըսել՝ թէ բոյսերուն հետ մէկտեղ կը ծածկեն երկրին երեսը, անոր համար դիւրաւ և առատութեամբ կը ժողվին օգտասէրք, ինչպէս կ'ըսէ Փարպեցին, և կը չորցնեն գանոնք պղպեղի հատերու նման, վերջը ջրոյ կամ ալբուի մէջ լուծելով՝ այն հրաշալի ծիրանեփառ կարմիր գոյնը կ'արձակեն, որ կը ծառայէ գունաւորելու կտաններ կամ ուրիշ նիւթեր, ինչպէս նաեւ մագաղաթաց վրայ գրելու, կամ ուրիշ արքունական կնքոց և նամակաց, և սրբազան գրքերու մէջ զարդեր նկարելու համար. որուն յաճախ կը պատահինք Հայոց կաթողիկոսաց կոնդակներու և թագաւորաց հրովարտակներու մէջ: Երբեմն այս ճճիներս կը գործածուին նաեւ իբրու դեղ ցաւոց և մկանանց»⁴:

Հայաստանի Ուրդանին և իր սէզին իբր

բուսակ կը գտնուի միայն ի Լիզս, և յԱմբրիկա՝ ի Մեզսիզոյ. ուրիշ ամէն ցեղ որդերն կարմրոյ (որոց յիսունի չափ տեսակ կայ) շատ արժէք չունին» (Յուշիկը, 1920, Բ. մաս, էջ 52):

2. «Բազմավէպ», 1890, էջ 276-277.

3. «Բազմավէպ», 1890, էջ 275-276.

4. Անդ, նոյն: Աւերջան ալ կը գրէ «Խոտերու մէջ դասնք տեսակ մը սէզ Հայկական բերմինըս (pimpi-